ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՒԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիոյ եւ Ռուսիոյ համար տարեկան 23 ֆրանգ
Ուրիշ ամէն տեղերի » » 20 »
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնէգիրները կանխիկ կը վճարուին։ Վերյամենայ կամ ետամենայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց սակ յաւելման բաժնէգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը ամէն օր կէսօրէ յետոյ, ժամ 2 էն մինչեւ 4 միայն։

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 29

1885 ՆՈՅԵՄԲԵՐ 21

(ՆՈՅԵՄԲԵՐ 9 Հ. Տ.)

ԵՒՐԱՓ

Կը հրատարակուի Երկ. եւ Ուրբ. օրերը

ԳՈՒԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն եւ ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանթիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանթիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE.

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Hôtel Forer).

ՔՈՂԱՆՈՒԹԻՒՆ

Վ.Ն. Տ. Տ. Մակար Քահանիկոս. — «Ովկ է օգնող «Ազմենիա»ին» յօդուածի առիթով. —Ազմենիա (Քարզմ. Le Sémaphore de Marseille լրագրին). —Յարաբերութիւն Պաստիարքի հետ ապրիզի եւ Փարիզի հայ ուսանողների բողոքը. —Փարիզի դեղագործական վարժարանը եւ մի հայ ուսանող. —Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն. —Հայեր ի Թիւրքիա. —Ինչ միջոցներով մեզանում կարելի է լաւ բերք ստանալ շերամի առողջ սերմից. —Ֆրանսա. —Տեղական. —Արեւելեան խնդիր. —Արտասահմանի լուրեր. —Վերջին լուր. —Ծանուցում։

ՎԵՀ. Տ. Տ. ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Վեհ. Կաթողիկոսը, Նոյեմբ 10ը, երեքշաբթի օր, մեծ փառքով ու պատուով մտեր է Էջմիածին։ Էջմիածնի բոլոր միաբանութիւնն ու Սիւնեաց անդամները իրեն դիմաւորելու գնացեր են։ Իջման Տաճարին մէջ դոհաբանական աղօթքներ կարդացուեր են։

«Ո՞Վ Է ՕԳՆՈՂՆ ԱԶՄԷՆԻԱՅԻՆ» ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

«Արմէնիա»ի 27 համարի մէջ ոմն վերնագրով մի խմբագրական յօդուած էր վերատպած, որի ընթերցումը առաջս ապաւորութիւն միայն կարող է թողնել այդ լրագրի դոյութիւնը անհրաժեշտ գտնող անձնաւորութեանց վերայ։ Թուրքաց կառավարութիւնը արդեօք է «Արմէնիա»ի մասին Հայաստանի մէջ նրա համար, որ այս վերջինը բողոքում է Հայաստանի ժողովրդի վրայ դրած դրուագ և նրա մերկացնին պատիւը քօղող խոյտառակութիւնների և բռնապատութիւնների դէմ։ Սրանից շատ լաւ հասկանալի է թէ ինչու Թուրք կառավարութիւնն կամ Հայաստանի մէջ կատարող չարագործութեանց գլխաւոր հեղինակի համար «Արմէնիա»ի դոյութիւնը հաճելի չէր կարող լինել։

Բայց Թուրքաց կառավարութիւնը որ այնքան ստեղծած վերաբերութեց դէպի «Արմէնիան», պէտք է խնացած լինել, որ նա միևնոյն անգամ ստեղծած և չարգանքի լիովին բացակայութեամբ վերաբերուեց և դէպի մեր ազգը։ Որովհետև «Արմէնիա»ի Թուրքաց կառավարութիւնից պահանջած էլ հենց վարուց ի վեր յատակաւոր Հայաստանի ժողովրդի արդար պահանջն է։ Շատ յստակի և միանգամայն անբաղդատելի է մեր առելի թշնամուց միշտ հենց մեզ յաղթուած տեսնել։ Ընչի՞ն վերագրել այս ստեղծ երևոյթը։ Երևի մենք կամ շատ թոյլ և անզօր մարդիկ ենք, կամ թէ մենք պատիւ և ինքնասիրութիւն ստուած բառերի նշանակութիւնները հալա չենք հասկացել։

Մեզ չի յայտնի որ մի որևէ հասարակութեան գործի մէջ ոչ պակաս դերը ունի խօսելու և լսե մտնելը։ Մեզ չի ծանօթ որ հայրենասէր ազէտների ժամանակ հասարակական ոգով օժտուած մտնելը մեծ օգուտ կարող է տալ ժողովրդին։

Եւրոպայի և Ռուսա-Հայաստանցի հայե՛ր, միթէ դուք չէք պատմ, որ Հայաստանցի անպատուած մեր եղբայրների պատիւը և իրաւունքը պաշտպանելը և ձեր արբազան պարտքն է կազմում։ Հայրենիքի դատը պաշտպանելու պատասխանատուութիւնը ամեն մի անհատի սրտին այնքան մօտիկ պէտք է լինի, որքան յոյն վաճառականի սրտին է մօտիկ իւր հայրենիքը, որի համար յանկութիւն է յայտնում գոհել 65,000 ֆրանկ կազմող իւր բոլոր հարստութիւնը, սրա հետ և իւր կեանքը։ Բոյն վաճառականը իւր բոլոր հարստութիւնը և իւր կեանքն է գոհ բերում հայրենիքի պատիւը պաշտպանելու գործին. իսկ հայ վաճառականները դոնե ընդհանուր ուժով եթէ մի ազգօգուտ լրագրի գոյութիւնը չը պաշտպանեն, այն ժամանակ մեծ ամօթ է։

1885 թիւ 17-ին Նոյեմբ.

Մոնպելիէ. ԿՈՒԱՆ

Ա Ր Մ Է Ն Ի Ա

(Շարունակութիւն 28-ր թիւ.ն եւ վերջ։)

Դժար է հասկնալ թէ ինչու համար Սուլթանի կառավարութիւնը այս ստեղծան կը հակառակի հայկական խնդրին. միթէ իրեն համար չտհատար չէ՞ կարևոր և ահռոզական եղող բարենպատակները գործադրել և դանդատների պատճառները հեռացնել. միևնոյն ժամանակ բարդացած լինել իւր հպատակների մի բանական մեծ մասին դրութիւնը որ մեռանելն ո՛չ պակաս ուշիմ, ո՛չ պակաս գործունեայ են և որոնք ընդհակառակը կը նպատակեն իւր երկրի բարգաւաճմանը։ Ուշադրութեան արժանի է սա կէտ որ Արմենիան համար մի կատարեալ ինքնավարութիւն չխնդրուի, այլ երկար տանել ի վեր ստիպողական ճանչցուած վերանորոգութիւնները և բարեկարգութիւնները կը պահանջուին միայն, անձնասա ժողովուրդների համար արդ ուրիշ բան չեն խնդրեր բայց միայն խաղաղ և ապահով ապրիլ, հանգստութեամբ իրենց աշխատութեան գբաղիլ, գաստիարակութեամբ իրենց վիճակ բարելաւել և խաղաղութեամբ ապրիլ իրենց հայրենակիցների, մահմետական տարրին հետ։ Ի՞նչ կայ սակայն մէջ խնդրի հակառակ և ի՞նչ վնասի մի պատճառ կը տեսնեն այդպիսի ընթացքի մէջ։

Եւ Եւրոպան, ինչո՞ւ կուզէ անտարբեր մնալ մի դժբաղդ ազգի տառապանքներին առջև. Եւրոպան, որ խոստացած է մասնակցիլ նորա վիճակի բարելաւութեան։ Ինչո՞ւ համար չտեսնէ, որչափ կարելի է, զսել արևելեան խնդրի դղրդիչ տարրերը. այդ խնդրի որ ամեն նկատումներով կղբաղեցնէ զինք և որ մի միայն և առանձնապէս Գուլկարիան, Բումելիան, Բոսնիատանի և միւսների գործերին չէ բազկացած։

Հայերի ինչ վիճակ ունենալու խնդիրը Արևելեան մեծ խնդրի էական տարրերէ մին է։ Պէտք չէ ապատել որ ժողովուրդը ամեն միջոցներ փորձելով և իւր դատէ յուսահատելով, ակռի միաձայն աղաղակել. «Լաւ է մեռնիլ քան թէ այսպէս ապրիլ։» Պէտք չէ որ լսուի թէ Եւրոպան այն ժամանակ միայն ուշադրութիւն կը դարձնէ մի խնդրի վրայ երբ նորա առարիկան հուր և բոց կարձակէ, երբ արիւն կայ թափուած։ Ո՛չ, այդ չէ Եւրոպաի կատարելիք պաշտօնը. հետևապէս և մենք վատահ իւր խնամատարութեան, վհատձեռնութեան և խաղաղասիրութեան վրայ, կը սպասենք այն յուսավ թէ Եւրոպան պիտի վճռէ իւր ազդեցութիւնն ի գործ դնել օսմանեան կառավարութեան մօտ։

Արդէն պատեհ առիթը ներկայացած է. ահռատիկ քօնֆէրանս կը լինի Կ. Պոլիս պատկառական և բուն Հայկական գործերին համար։ Թո՛ղ պետութիւնները որոշած լինին յիշեալ գործերին համար միայն խօսակցիլ, թո՛ղ նոքա վճռեն «նախկին հատատուած վիճակ»ը վերահաստատել կամ կարևոր փոփոխութիւններ մըտցնել Պէրլինի դաշնագրին մէջ, այդ ամենը ոչ մի կերպով հակառակ եղած չլինիր իրենց որոշման եթէ վճռեն ապրտ կերպով պահանջել և պնդել դաշնագրի 61-րդ յօդուածին անմիջական գործադրութեան համար վասն զի ժամանակը հատած է և ա՛լ չէ կարելի համբերել։

Աղերսելով կը խնդրենք Ֆրանսական կառավարութենէն որ իւր օրինաւոր ազդեցութիւն ի գործ դնէ միւս պետութիւնների մօտ նորդորելու համար այս նպատակով. Ֆրանսան որ, ինչ որ ալ լինի, տակաւին բաւական ազդեցութիւն և հմայիչ զօրութիւն ունի Եւրոպաի խորհուրդներին մէջ, Ֆրանսան որի անունը կը ճնդայ Աբեղելի չորս անկիւնները և մանաւանդ Արմենիոյ մէջ, որի լեզուն մի տիեզերական լեզու եղած է և պատասխան Արեւելքցիներին համար, Ֆրանսան, կրնայ, չպիտի ուզէ ղրկել մեզ իւր թանկագին աջակցութենէն որի վրայ հատատած յոյս դրած ենք մենք։

Փարիզի Temps, Evénement, Soleil, Justice և այլ լրագիրների դրածին համեմատ, մի հայ պատգամաւորութիւն ներկայացած է արդէն այս խընդիրքով Պ. որ Ֆրէյսինէին որ բարեհաճ ընդունելութիւն ըրած է իրենց և խոստացած է իւր աջակցութիւն կարելի եղած չափով։ Միւս Հայ գաղթականութիւններն ալ Լօնտոնի, Մանչեսթրի, Վիէննայի, Պուքրէշի, Վարնայի, Պէրլինի մէջ, կը շտապին իրենց կողմէ հայկական խնդրին վրայ հրատարակութիւնք ընել որ ամեն կողմէ եղած այս բնդհանուր բողոք ապագրութիւն չպիտի մնայ։

Կսպասենք յուսավ և հաստատամտութեամբ մի մեր գատ արդար է և մեր պահանջ չափաւոր։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՌԱԳԻՐՆ ԵՒ ՓՈԲՐՔԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Փարիզի Temps լրագիրը նոյ. 11ի թիւին մէջ հրատարակած է Թիւրքիա

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

«Ինչ տուգրի՞ն ջամ։»

«Ինչ տուգրի՞ն ջամ։»

«Ինչ տուգրի՞ն ջամ։»

կանգնած օդ և տաք խնամատարութիւն չլինի, որովհետև դրանք նպաստում են հիւանդութիւնների զարգանալուն։

Ա.յն որդները՝ որ հիւանդանում են վերջին քնումի՝ բաժոժ գործում են, թէև նրանց հիւանդութեան հետքը բաժոժից երևում է։

Հիւանդութիւնը առհասարակ կայանում է նրանում, որ տերևների վրայ, կամ որդների մէջ հատաքլում են մանրադիտական (հատարակ աչքի համար անտեսանելի) կենդանիներ կամ անկորդներ. որոնք իրանց աւերուածքը անելուց յետոյ մնալով չերամների պատերի, կարասիքի, ևն. վրայ՝ վարակում են հետևեալ տարին։ Այդ հիւանդութիւնների առաջն առնելու համար կայ երկու միջոց՝ մէկը պատուհանի ձևով սերմ հանելը, որի մասին յետոյ, միւսը՝ ախտահանութիւնը, որ հետևեալն է՝

Հէնց որ բաժոժը քաղում են, շաղատը դուրս տալիս ու արևում՝ վառում են սենեակի բոլոր ծակերը, մինչև անգամ ծխնելոյզը (բուխարին) և ծուխ տալիս։ 7 մխալ ծծումբ (քուքուրդ) մի խորանարդ (1) արշին օդի համար, կամ 7 ֆունտ ծծումբ 100 խորանարդ արշին սենեակի համար բաւական է։ Օտար խառնուրդից ազատ ծծումբը 4 բաժին անելով ածում են հողէ անօթների մէջ և դնում սենեակումն զանազան տեղերում, վառում և դուրս գալիս՝ դուռը պինդ փակելով։ Այս գործողութիւնից մինչև 24 ժամ չանցնի՝ պէտք չէ նորա մտնել սենեակի մէջ։ Յետոյ ախտահանութիւնը աւելի կատարեալ անելու համար պէտք է սենեակի չարժական առարկաները լուանալ վաղով ջրում, իսկ անշարժ առարկաները և տունը լուանալ չը հանգած կրի ջրով։

Այս գործողութիւնը եթէ որևիցէ պատճառով բաժոժաքաղից յետոյ չէ կատարւում՝ դնելա ձմեռը պէտք է կատարել։

Աւելի լաւ է եթէ որդնը դնելուց 8 օր առաջ երկրորդ անգամ ծծմբի ծուխ տան սենեակին նշանակած ձևով և օդը լաւ մաքրեն։

10 ՈՐԴՆԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԿԵՆԴԱՆԻՔԸ

Մրջիմները ձգտում են աւելի առաջին և երկրորդ քներումը. այս հատակում դժուար չէ նրանց դէմ պաշտպանել որդներին՝ սեղանի կամ տախտի (պօլկա) ոտները դրած լինելով ջրով լի կամ պղնձէ ամանի մէջ։ Կարելի է նաև փոթմոթել սեղանի ոտները բամբակի հատ պատրաստով կամ խաղել կաւճով (մէլ)։

Մկների դէմ գործ են ածում մկնդեղ կամ ուրիշ այսպիսի թունաւոր դեղ խառնած խմորի մէջ. բայց ուշադիր պէտք է լինել, որ մկները անպղտոյշ կերպով գործ դնելով՝ կարող ենք փորձանքի հանդիպել—աւելի լաւ է ո-

(1) Սենեակի խորանարդ չափը իմանալու համար պէտք է չափել սենեակի երկարութիւնը, լայնութիւնը եւ բարձրութիւնը ու այդ թիւերը բազմապատկել միմեանց հետ. գոյացած գումարը ևզանակում է սենեակի խորանարդ չափը։

րոշ մոլորներ (թալակ) դնելը։ Իսկ որդների փորը հատակում, քանի որ մեծ տեղ չեն բռնում, կարելի է նրանց դնել մի տախտի վրայ՝ որ կախուած է առաստաղից (օրճանք) և թոկերի վրայ բարձրից հաղցրած է գազ (հոս, գէսվան) փչերը դէպի վեր։

Թռչունների մսատքը խափանելու համար Եւրոպայում չերամանոցի լուսամուտները ծածկում են երկաթէ թելի հիւսուածքով։

Մնացած կենդանիների դէմ չերամանոցը մաքուր պահելով՝ գուցէ կարողանաք փորքիչատէ պաշտպանվել։

11 ՈՐԴՆԸ ՑԱԽԵԼԸ ԵՒ ԲՈԺՈԺԱՓԱՂԸ

Թէ ե՛րբ և ի՛նչպէս պէտք է ցախել նոյնպէս թէ ե՛րբ պէտք է բաժոժը քաղել և յետոյ բաժոժը ի՛նչ անել—ամէն չերամապահ գիտէ։ Մենք միայն կը նկատենք, որ Ագուլիսում գործածվող ցախի մեծ մասը անյարմար է այդ նպատակի համար։ Խիտ ծակոտ փչերով թուփերի տեղ՝ աւելի լաւ է գործ ածել ուրիշ տեսակ փափուկ խոտեր. մինչև անգամ բարակ ճիւղերից կարելի է փորքրիկ տրցակները (գատա) կապել և դնել։

Բաժոժը նշած ժամանակին չեն չորացնում կամ խեղդում՝ այնուհետև օրական հարիւրին մէկ պակասում է քաշը։

12 ՍԵՐՄ ՎԵՐ ԱՌՆԵԼԸ

Մեր տեղական որդնի հիւանդութեամբ վարակվելը շատ տարի է որ մեզ տհաճացած է սեփական որդնից սերմ չը վերցնել, այլ ամէն տարի դիմել Եւրոպային՝ թանդ վճարելով առողջ սերմի համար։ Այդ առողջ սերմը ստանալու համար այնտեղի դիտական չերամապահները հետևում են գետաչօրի ձևով առաջ ամէն մի սենեակ և յետոյ ամէն մի թիթեռնիկ առանձին առանձին. այն սենեակի բաժոժից, ուր հիւանդ որդն է երևացել, բնաւ սերմացու չեն վեր առնում. և այն թիթեռնիկը՝ որ սերմ ածելուց յետոյ՝ խոշորացոյցի տակ հիւանդութեան նշաններ է յայտնում՝ նրա ածած սերմը դէն են ձգում։

Եթէ երբեմն Եւրոպայից բերված սերմերում պատահում են հիւանդոտներ՝ ասա այս դէն ածելիք սերմերին են լինում, որ էժան գնով ծախում են այնտեղ անխիղճ մարդիկ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Դիտնականների հաշուով 1 մխալ առողջ սերմից վեր առած որդնը, եթէ պահվի ինչպէս հարկաւորն է, պէտք է տայ 30 ֆունտ բաժոժ։

Վեր առէք ԱՌՈՂՋ ՍԵՐՄ, պահեցէք ՆՕՍՐ (սէյրադ), ԿՈՒՇՏ ու ՄԱՔՈՒՐ (ոչ ապականված) ՕԴՈՒՄ—և այդպիսի որդնից կը առանաք։

Ե. Ա.

ՖՐԱՆՍԱ

Բչ. օր, Նոյ. 16ին, նախարարապետ Պ. Պրիսօն խորհրդարանին մէջ կարդաց նախարարութեան յայտարարութիւնը որով կը բացատրէր թէ երկնք ինչպէս կը խորհին երկրին ելմտական վիճակին, դաղթական քաղաքականութեան, Թօնքինի, Անամի և Մատակասքարի գործերին, պետութեան և ներկեցու մէջ եղած յարաբերութիւններին, տնտեսական ինդիրներին և հանրապետութեան հակառակորդ պաշտօնատարները պաշտօնանկ անելու խնդիրներին վրայ։

Այդ յայտարարութիւնը ծայրայեղ ձախակողմեաններին յուրտ ընդունելութիւն դտած է, որովհետև Պ. Պրիսօնի նախարարութեան կողմէն ազդու և կտրուկ ձեռնարկների ծրագիրներ չեն տեսներ երեսից բաղձանքները իրականացնելու համար։ Ընդհանրապէս այդ յայտարարութիւնը մեծ և թոյլ ոճով գրուած կը գտնեն։ Յայտարարութեան մէջ քաղաքական յանցանքներով դատապարտուածներին ընդհանուր ներողութիւն տալու մասին ալ ոչինչ չկար և կը խօսուի որ Պ. Պրիսօն ընդհանուր ներողութեան կատակից չէ և իշ. օրի նախարարական ծրագրին մէջ ոչ մի յուշուած է հանրապետութեան նախագահէն ներողութեան ընդհ խնդրել միայն 4 դատապարտուածների համար որ են Լուիզ Միշէլ, Ֆրանսուէթքին և Լիոնցի երկու անիշխանականները։ Այս կէտ ևս ծայրայեղ ձախակողմեանների գայրոյթը չարժած է։

Զորեքշաբթի օր ձախակողմեան եւ ըռափոխանները կրաձա-Օլիանի մէջ մի հատաքում արին և այնտեղ խորհրդակցութենէ վերջ որոշեցին մի պատուիրակութիւն ղրկել Պ. Պրիսօնին առաջարկելու համար որ հանրապետութեան նախագահի ընտրութեան համար քօնկրէսի գումարումը փոխանցէ։ Պատուիրակութիւնը նոյն օր ներկայացաւ Պ. Պրիսօնին որ պատասխանեց թէ մի այդպիսի ծանր խնդրի համար չէր կրնար ինք անձամբ պատասխան տալ, հանրապետութեան նախագահին և իր պաշտօնակիցներուն հետ չխորհրդակցած։ Ուստի յայս յայտնեց որ չաբաթի օր (այսօր) թերևս կարենայ մի որոշ պատասխան տալ։

Ձախակողմեանները թէև սրտնեղած են նախարարութեան յայտարարութեանը վրայ, բայց հանրապետութեան նոր նախագահի ընտրութեան մեծ դործը դեռ չկատարուած, չեն ուզեր նախ արարան տագնապ յառաջ բերել։

ՏԵՂԱԿԱՆ

Թուրքիան Մարսէյլէն գնացող նաւերին վրայ դրած հնդօրեայ քարանթինան 2 օրի իջուցեր է եղ. օրէն ակսած։ Մինչդեռ Մարսէյլի մէջ վաղուց է որ քօլերան անհետացած է, չենք հասկնար թէ ի՛նչ մտքով կը շարունակուին այդ քարանթինաները։

—Չորեքշաբթի երեկոյ Առևտրական վարժարանին մէջ ձրի դասախոսութիւնների սկզբնաւորութիւն եղաւ բացման հանդէսով։ 300 էն աւելի ե-

բիտասարդներ աշակերտ եղած են։

—Վերջին քօլերայի ջոհերին օգնելու համար կազմուած մանաժողովը եչ. օրի նստին մէջ որոշեց 92,350 ֆր. բաժնել քօլերայի զոհ եղողների շնորհած արքերին։ Եղած հանգանակութեան դումարը կը հասնի 132,494 ֆրանգ 10 սանթիմի։

—Չօրաւոր Գ. Պրիեր տը լ'Իոլը, նախկին հրամատար Թօնքինի ֆրանսական բանակին, երէկ հասաւ Մարսէյլ Թունկ-Ձէ չոգենաւով։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Սերպօ-պուլկարական պատերազմի դաշտին վրայ կատարուած գործողութիւնները մեր ընթերցողներին փոքրիչատէ մանրամասնօրէն ծանօթացնելու համար, այս օրէն սկսած պիտի գնենք զանազան ապրիւրներէ հոս հասած հեռագրների թարգմանութիւնը, երեսց օրական կարդով։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզ, 18 նոյ. երեկոյ

Սօֆիայէն կը հեռագրեն թէ Սերպերը մեծ զօրութեամբ յարձակեցան երէկ Սլիվնիձայի վրայ, ոչ և ձախ կողմերէն։ Սերպերը 5 հազարամէթր տեղ յետ մղուեցան մեծ կորուստով։ Աղէքսանդր իշխանը անձամբ հրամայարութիւն կանչեր։

Պուլկարները 20 վաշտ զօրք ուղեկն և դրեթէ 40 թնդանօթ։ Բուլկիէն զօրքերը կուգան դէպի պատերազմի դաշտը, նուագածուներ երեսց առջևէն պատերազմական եղանակները երդելով և ժողովրդէն մեծ ոգևորութեամբ ընդունելութիւն գտնելով։

Պերլին, 18 նոյ. երեկոյ

Զրոյց կը պտըտի թէ Սերպերը դըբաւած են վիտինը ուր 100 կտոր թնդանօթ գտած են։

Մօրավան զօրարաժինը Թօփալովիչ գնդապետի հրամանին տակ որ Թրևինը գրաւեց առանց, երէկ ղըկուեցաւ Պրէսնիքի վրայ։

Փարիզ, 19 նոյ.

Երեքշաբթի օր Սլիվնիձայի մէջ Սերպերի ձախ թևը կատարեալ պարտուած է։ Պուլկարները երեկոյեն եւ առեն ինկան այն սերպ զօրքերի որ ճակատ առ ճակատ իրենց վրայ յարձակած չէին։ Այժմ Պուլկարական բանակատեղին Սլիվնիձա 17 հազարամէթր է։ Սերպերն յաջողեցան պահպանել իրենց ազ թև։ Ալէքսանդր իշխանը շատ անգամ քշեց իր զօրքերը կռուին մէջ և մէկ անգամ ալ ինք անձամբ արձակեց մէկ թնդանօթ։ Պուլկարների կորուստը փիչ է եղած։ Տէյլի-Նիուսի դրած ինդեպէնտայէլ, Սերպերի կորուստը եղած է 3,000 մեռեալ կամ վիրաւոր, 10 թնդանօթ և 350 ձի։

—Փարիզի Սերպիական դեսպանը Պէլկրատէն նոյ. 19ին ընդունած է հետևեալ հեռագիրը.

«Վիէննայէն տրուած այն հեռագրութը որ կըսէ թէ Սլիվնիձայի յար-

ձակման մէջ մեր զօրքերը յետ մղուած են, ուստ է։ Նոյ. 17 ին Գուլկարները յարձակեցան մեր ձախ թեւի վրայ և թանձր մառախուղին չնորհով յաջողեցան մօտենալ մեր դիրքերի. բայց աստիկ մի կռուէ յետոյ յետ մղուեցան։ Այ թեւը յարձակեցաւ պուլխարական ամրոցներին վրայ Սլավինիտի մէջ և Գուլկարները յետ մղեց իրենց առաջացած դիրքերէն։ Թօփալովիչ գնդապետը երեկ Գրէնիչքի և Բէրնիչքի մէջտեղ երկու խումբ զօրքերով արձակեցաւ երկու պուլկար վոլտերի վրայ որք իւր վրայ կը քալէին։ Գուլկարները 100 մեռեալ և վիրաւոր ունեցան և 60 զօրք ալ գերի բռնուեցաւ։»

Պէլկրատէն կհամցունեն թէ զօրավար Լիչանին որ Վիտինի առջև կը գործէ, կառարեալ յաջողութեան մէջ է։ Վիտինի բերդը որի առջև հաստած են Սերպերն այնչափ յամրոզ կռիւներ յետոյ, անչուշտ պիտի պարտաւորի անձնատուր լինիլ։ Մինչև անգամ պրոյց կայ թէ արդէն անձնատուր եղած է. բայց այդ լուր առուգութեան կը կարօտի։ Թօփալովիչ գնդապետի հրամանատարութեան տակ եղող Մորավայի զօրաբաժինը Իպլօրն առաւ որ Քիւսթենտիլէն Սօֆիա երթալու ճանապարհին վրայ է։ Կըսուի թէ այդ քաղաքի առումն յետոյ Սերպերը քալած են Բատօվիլի վրա ուր մի նոր կռիւ տեղի ունեցեր է և յայ եթէ կարելի է հաւատալ վերջին հեռագիրներուն, Սերպեր դրաւեր են Բատօվիրը։ Եթէ իրաւ է, ուրեմն այժմ Սերպեր ուղղակի Սօֆիային վրայ կը սպառնան։

Սօֆիայէն կը հեռագրեն թէ Գուլկարները կատարի մի կռուէ յետոյ Սիսէրլիա մտան. 150 գերի բռնեցին Սերպերէն որոյ զօրքերը խառնաշփոթի վիճակի մէջ յետ քաշուեցան Պիւկնօձէն, Սմոլչաէն և Թիւտէնէն։ 25,000 պուլկար զօրքեր, Նիքօլայեֆ գնդապետի հրամանատարութեան տակ, կը քալեն Սերպիոյ սահմանապլխին վրայ։ Սերպերը կրակ ըրին կարմիր–խաչի ընկերութեան կառքերին վրայ։

Փարիզ, 20 նոյ. երեկոյ.

Երէկ պատերազմը նորէն սկսեց Սլիվնիցայի առջև։ Առաւօտեան ժամ 7 էն սկսած, պուլկարական բանակի մէջ թեւը վար իջաւ այն լուռնադաշտէն որ նախորդ երեկոյին բռնած էր և յարձակեցաւ Թէնաժի բանակին վրայ որ նոր դէմ հաստատուած էր երեք բարձր դիրքեր բռնելով և որոց ամէն մէկէն յաջորդաբար սոխպաեցաւ յետ քաշուիլ, սակայն կուտրածները կրեցուով։ Այդ միջոցին պուլկարական բանակի կեդրոնը որ Սլիվնիցայի ամրոցներուն և պատնէշներուն մէջ կը գտնուէր, սաստիկ կրակ ըրաւ դաշտին մէջ հաստատուած սերպիական զօրքերուն վրայ։ Սերպերը քաշուելեամբ պնդապրեցին. բայց կէսօրին մօտ ա՛լ չկրնալով դիմանալ Պուլկարներուն ուժգին յարձակման, սոխպաեցան յետ քաշուիլ։ Այդ ժամանակ Պուլկարները թաւցուցին իրենց ամրաձգութիւնն. իսկ ժամ 4 ի սահմաններ նորէն սկսան սաստկութեամբ։ Սերպերը ամիսուեցան դէպի Պուլկարների ձախակողմը և հետզհետէ օգնութիւններ հասնելով իրենց, յաջողեցան ալդիլել Պուլկարներին որ իրենց յարձակողական դիրքէ ա՛լ սահել չմիջեն։ Նոյ. 19 ի կռիւը կատարեալ յաջողութիւն ունեցաւ Պուլկարներուն համար։ Երկու կողմն ալ մեծ կորուստներ ունեցած են. Պուլկարները 300 զօրք գերի բռնած են Սերպերէն։

Սերպերը իրենց զօրաբանակի կեդրոնը յետ քաշեցին Վինչէ Բիլօֆ որ իրենց մեծագոյն ջնաստած լինելը ցոյց կուտայ։ Վիտինի առումը մինչև այժմ չէ հաստատուած. կերևի թէ ճիշդ չէ։

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ, 18 նոյ.

Վիէննայի մէջ այնպէս համոզուած են թէ Աւստրիայի և Ռուսիայի մէջ համաձայնութիւն գոյացած է։ Գիտի թողուն որ Միլան Թագաւորը մինչև Սօֆիա մտնէ։ Այդ ժամանակ երկու պետութիւնները իրենց հետ ունենալով նաև Ալմանիան, պիտի միջամտեն խաղաղութիւնը հաստատելու համար։ Աղէքսանդր իշխանը գահընկեց պիտի լինի. բայց Պուլկարիայի և Բուսիլիի միութիւնը ընդունելով, Պուլկարիայի իշխան պիտի լինի Ռուսիացի մի Մեծ Դուքս։ Սերպիային ալ հողային վարձատրութիւններ պիտի լինին։ Ա՛յս կերպով թէ՛ Ռուսիան և թէ՛ Աւստրիան գոհ պիտի լինին։

Փարիզ, նոյն թուին

Ազատքին գործերի նախարար Պ. ը Ֆրեյսինէն այս առաւօտ, անհատական կերպով ընդունեց Հելլենական պատուիրակ Պ. Թիմոլէօն Ֆիլեմոն, որ Աթէնքի քաղաքապետական խորհրդի նախագահն և երեսփոխան նախկան ժողովի անդամ է։ Պ. Ֆիլեմոն բացատրեց այն պատճառները որոց համեմ ղրկուած Յունաստան պետք է որ արշաւէ ընդհատ Օսմանեան հողին վրայ։ Պ. Ֆիլեմոն կաշառ ազգաւ Ֆրանսայի բարեհաճ զգացումներին որոնք վաղուց ի վեր ցոյց տուած է միշտ Յունաստանին։

Պ. ը Ֆրեյսինէն իրեն ունկնդրութիւն միայն անելու ստիպուեցաւ զի ոչ չէլաւ և ըսաւ որ չիպարծեր թէ մի այդպիսի խնդրի համար կարենայ ի բրեն հետ բացատրութիւնների մէջ մտնել։

Պ. Ֆիլեմոն յայտնեց թէ նոյն պատճառով պետք է երկայ նաև միւս մայրաքաղաքներն, դիւանագրապետ Լօնտոն և Վիէննա։

Աթէնքէն ստացած տեղեկութիւններին նայելով, Յոյները կարող են ընդհատ 100,000 մարդ հանել պատերազմի դաշտը։

Աթէնք, 18 նոյ. երեկոյ

Նահանգէն կհամցունեն թէ Օսմանեան զօրքերին և Եպիրոսի բնակիչներին մէջ կռիւ ծագելու երկիւղ կայ։

Վիէննա, 18 նոյ. երեկոյ

Ռուսիան և Անգլիան համաձայնեցան համար Պամպոր իշխանին Չանքերը ի դերև եղած են։

Կասեն թէ Աւստրիան խոստացած է Իտալիային հողային փոխարինութիւններ անել, եթէ սա միանայ իրեն հետ Պալքանեան թերակղզւոյն մէջ աւստրիական ազդեցութեան նպաստաւոր փոփոխութիւններ մտցունելու։

—Բուժելիաէն Կ. Պօլիս դնացող պատուիրակները Պ. Պ. Հաճի Բեհրոփ և Զամաքոփ նոյ. 4 ին հասած են Ֆիլիպէ։

—Կ, Պօլսէն կը հեռագրեն նոյ. 19 ին թէ Ալեքսանդր իշխանը պատասխանելով Բ. Դրան ծանուցագրին որ կը վերաբերէր Սերպիոյ դէմ իրեն օգնութիւնը խնդրուելուն, հեռագրեց Սուլթանին որ ինք և պուլկար ժողովուրդը կը հպատակին Բ. Դրան և թէ պուլկարական զօրքերը կը պարպեն Բուժելիան։ Սուլթանը գոհ լինելով այս յայտարարութենէ, անմիջապէս ժողովի հրաւիրեց նախարարների խորհուրդը։

—Կը կարծուի որ Յունաստան ծովային կողմէն յարձակում պիտի սկսի Թիւրքիոյ վրայ։

—25,000 թիւրքեր Դամասկոսի մզկիթներին մէջ կեսուած են որ քաջ շտապով կրկտէ և Եպիրոս պիտի ղրկուին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ «Աւետարանական Դաշնակցութիւն»ը Թիւրքիոյ քրիստոնեայների վիճակին նկատմամբ մի տեղեկագիր տուեր է արտաքին գործերի նախարարութեան խորհրդական Պ. Պարքին որ խոստացեր է Կ. Պօլսի դեսպանին գրել, ինչ որ կարելի և արժանաւոր է, ընելու համար։

—Լսուր կայ թէ Բուսիոյ արտաքին գործերի նախարար Գ. ը Կիէրս պիտի հրաժարի և իւր տեղ պիտի անցնի կոմս Իկնաթիեֆ։

—Ռանիտէնէն մի հեռագիր կհամցնէ թէ նոյ. 18 ին Անգլիացիներ 3 ժամ կռուէ յետոյ գրաւեր են Պէրմանիոյի Մէնհլա քաղաքը։ Կորուստը չատ մեծ է եղած։ Անգլիացի սպայներէն 1 անձ միայն մեռած է և երեք վիրաւորուած։ Մանսաէլի ճանապարհը ազատ է այժմ։

—Հռոմի մէջ մի տեսարան հրատարակուած է «Իտալիոյ յոյսերն» վերնագրով որ կը կարծուի թէ հրաժարեալ մի դիւանագէտի գրչէն ելած է։ Տետրակը կը փաստաբանէ թէ Ալեւելեան խնդիրը կարելի է լուծել Իտալիոյն յանձնելով այն իտալական նահանգները որք այժմ Աւստրիոյ տիրապետութեան տակ կը գտնուին։

—Քանտոնի մէջ Մէթխոնների սպառամիալոտ Բիւլմն գլխաւորութիւնը սաստիկ դրդուած է Մէթխոնների (Ֆրանսական ցեղէ սերած Բանտոնացի)։ Ժողովուրդը Ֆրանսական դրօշակներ պարզած և Ֆրանսական երգեր երգելով մեծ բազմութեամբ չրջեր է փողոցներն և ցոյցեր սրեր է կառավարութեան դէմ։ Նախարարների և Անգլիոյ թագուհուն պատկերները չվնասելով կախեր և այրեր են։ Ոստիկանութիւնը միջամտեր, բայց անկարող դտնուեր է բազմութեան առջև։ Ուսանողները Փէպէի մէջ մեծ բազմութեամբ պաշտեր են փողոցները պօռալով. Փա՛ռք Բիւլմն։ Քանտոնի կառավարութիւնը սրոշեր է թոշակ յատկացունել Բիւլմի թոլած այրի հինգ և որբերին։

—Ալմանական Խորհրդարանին բացման առթիւ կայսեր կողմէն կարդացած ճառը ղօրաբանակին և ծովային զօրութեան համար ծախքերը աւելցունելու պէտքը կպատճառէ։ Ալմանիոյ և Սպանիոյ մէջ եղած վէճը խաղաղութեամբ վերջնանալու, նոյնպէս և Պալքանեան պետութիւններին մէջ ծագած կռուին պատճառով Եւրոպական պետութիւնների խաղաղութիւնը չվրդովելու հաստատ յոյսեր կը յայտնէ։

—Կ. Պօլսէն կը հեռագրեն նոյ. 20 ին թէ սաստիկ փոթորիկ եղած է և մի քանի նաւեր կորսուած են Սև ծովի և Մարմարայի ծովին մէջ։ Ալէկոծութիւնը դեռ կը շարունակուի։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Հավասի գործակալութիւնը կը հեռագրէ թէ Լորտ Սօլզպէրին հանդիսաւոր և վճռահայտ ելոյթ մի պատասխան տուեր է անգլիահայ հայերի ուսած յիշատակագրին, 61–րդ յօդուածի գործադրութեան նկատմամբ։

ԾԱՆՈՒՑՈՒՆ

1886 ԹՈՒԱԿԱՆԻ ՁՈՒՆՎԱՐ ԱՄՍԷՆ

ՎԵՐՍՏԻՆ

ԿԸ ՍԿՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻԼ

“ՄՇԱԿ,, ԼՐԱԳԻՐԸ

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՄԵՆՔ.

Պ. ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆՈՒՆ

—

Մանրամասն յայտարարութիւնը կը

Հրատարակուի իր ժամանակին։

Հասցէ՝ Rédaction du journal **MCHAK**

TIFLIS *(Caucase-Russie)*,

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

Մ. ՓՈՓՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

Հայերէն տպարան Մ. Փոփուգալեանի

ՄԱՐՍԷԼ

Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.